3930

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«25» 03 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0025-22

Ձեռնարկողը՝ *<< Սենա-Արբա >> ՍՊԸ*
Ք Երևան, Արշակունյանց 11/1

Գործունեությունը՝ *Երևան քաղաքի Արշակունյաց փողոց 11/1 հասցեում գործող բազմաֆունկցիոնալ համալիրի վերակառուցման և հարկերի ավելացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Կենտրոն համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0025-22

«25» 03 2022թ.

<< Սենա-Արբա >> ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արշակունյաց փողոց 11/1 հասցեում գործող բազմաֆունկցիոնալ համալիրի վերակառուցման և հարկերի ավելացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<< Սենա-Արբա >> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Արշակունյաց փողոց 11/1

Ներածական մաս. Բազմաֆունկցիոնալ համալիրի վերակառուցման և հարկերի ավելացման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան Արշակունյանց 11/1 հասցեում: Գործունեության նպատակն է արդիականացնել բազմաֆունկցիոնալ համալիրը: Գոյություն ունեցող բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է 1 հարկանի հասարակական սպասարկման կետից և 6 հարկանի գրասենյակային մասնաշենքից: Հասարակական սպասարկման կետն ունի անտրեսոլային հարկ: Նախագծով նախատեսված է 1 հարկանի շինության վրա ավելացնել 1 հարկ՝ անտրեսոլով, իսկ գրասենյակային մասնաշենքի տանիքում՝ գոյություն ունեցող աստիճանավանդակի ծավալին կից ավելացնել պահեստային սենյակ, սրահ և հանգստի գոտի աշխատակիցների համար:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան, Արշակունյաց 11/1 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ համալիրի վերակառուցման և հարկերի ավելացման նախագծի համար հիմք են հանդիսացել կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը, Երևանի քաղաքապետարանի կողմից N01/18-0712- 15509-281 19.04.2021թ. տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը: 1-ին հարկում՝ մուտքի մոտ գտնվող վերելակին կից նախատեսված է տեղադրել ևս մեկ վերելակ,

որը կբարձրանա 2-րդ հարկ, գործելու է որպես «SAS HOME», իսկ անտրեսոլային հարկը՝ պահեստային տարածք: Անտրեսոլային հարկ մուտքը իրականացվելու է 2-րդ հարկից՝ «5» և «6» առանցքների միջև՝ «Դ» առանցքին կից նախատեսված աստիճանի և շենքի ետնամասում՝ վարչական մասնաշենքի հետ հատման անկյունում նախատեսված վերելակի միջոցով: Վերելակը նաև ապահովում է մուտք դեպի 2-րդ հարկ: Վարչական մասնաշենքի տանիքում նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկցիայից պատրաստված սրահ, ջրավազան (ջրավազանը իրենից ներկայացնում է 1.6մx4.6մx0.3խմ=2.2 խմ ծավալով դեկորատիվ ավազան, ջուրը շրջանառու է), պահեստային սենյակ, ինչպես նաև շարժական շվաքարան և պերգոլա: Հարթ տանիքից անձրևաջրերի և հալոցքների հեռացումը նախատեսված է իրականացնել շենքի արտաքին պատերին կից խողովակների միջոցով: 2-րդ հարկի մակերեսը կազմում է 1694.7քմ՝ կաթսայատան հետ միասին, օգտագործվող տանիքինը՝ 314.2քմ, իսկ անտրեսոլային հարկինը՝ 697.2քմ: Արշակունյաց պողոտային հարող հատվածի բարձրությունը շենքի զրոյական նիշից կազմում է 14.6մ, իսկ գրասենյակային մասնաշենքինը՝ 25մ:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման համար, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել, ներքին միջավայր ապահովելու նպատակով մեծ ծաղկամաններում կտնկվեն նաև որոշ թփեր և ծառեր: Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում: Բազմաֆունկցիոնալ համալիրն ներկայումս գործում է, որպես «Սաս ֆուդկորտ» հագեցած է ժամանակակից օդափոխության, սառնամատակարարման և ջերմամատատակարարման համակարգերով: Ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ: Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով: Ավտոկայանատեղիների օդի արտածումը կատարվում է ներքևի և վերևի զոնաներից հավասարաչափ: Շենքի էներգոարդյունավետությունն ապահովվելու նպատակով շենքի պատերը և տանիքը նախատեսված է արդյունավետ ջերմոմեկուսիչ նյութերի կիրառմամբ սահմանված նորմերն ապահովելու նպատակով:

Շինարարության նորմատիվ տևողությունն որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 24,0 ամիս կամ 2 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է Շրջակա միջավայրի նախարարության "Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն" ՊՈԱԿ (էկոմոնիտորինգ) կողմից: Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի

երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ: Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում: Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ: Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից: Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով: Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով: Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից: Հետիոտների անվտանգությունն ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով: Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով: Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու: Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակն, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ 60x70x2/1000= 8.4 տ և շինարարական աղբն է 60 խմ ծավալով: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է

կանոնավոր: Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 8.4 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 60 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/ (հիմնականում կազմված են իներտ ֆրակցիաներից) (բետոն, աղյուս, կերամիկա և այլն, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում: Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների: Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝ փոշու արտանետումներ նախապատրաստական աշխատանքների ընթացքում, վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx): Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում, շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝ ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալն ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝ շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ

ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում, պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին: Բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ, փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 900000 դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով :

- Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

<< Սենա-Արբա >> ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Արշակունյաց փողոց 11/1 հասցեում գործող բազմաֆունկցիոնալ համալիրի վերակառուցման և հարկերի ավելացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝ Վ. Հարությունյան